ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 209

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ազնվամորու Աշխար Գ/Կ-ի նախագահ Մարինե Հարությունյանի դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.09.2009 թ.-ի թիվ 1066-Ն որոշման 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 03.07.1997 թ.-ի թիվ 237-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ որոշում եմ

1.Համայնքային սեփականություն հանդիսացող,վարձակալության իրավունքով տրամադրված 06-057-0146-0010 կադաստրային ծածկագրի 1,1992 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողի գործառնական նշանակությունը ցածրարժեք հողատեսքից փոխել բարձրարժեք հողատեսքի՝ այն է, բազմամյա տնկարկ/հնդավոր/ (չորրորդ կարգ) գործառնական նշանակության:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21 թ. 05 27
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 210

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0057-0040 ծածկագրի 0,08 հա տնամերձ հողամասին իր շենք շինություններով տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ, 22-րդ փողոց, թիվ 14:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21 թ. 05 27
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 211

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.06.2020 Թ.-Ի ԹԻՎ180, 181 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԴԵՆԴՐՈ ԳԱՐԴԵՆ» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Օսիկյանի և Ա. Զալինյանի դիմումները, Գյուլագարակ համայնքապետարանի 30.04.2021 թ.-ի թիվ 1 արձանագրությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ որոշում եմ.

1.Ուժը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ղեկավարի 2020 թ.-ի հունիսի 15-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 180 և 2020 թվականի հունիսի 20-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 181 որոշումները:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ.ՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 21 թ. 05 27
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 212

ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ, ՏԱՐԱՆՋԱՏՎԱԾ 0.11428 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդվարդ, Զեփյուռ, Հայկանուշ, Մելինե, Անդրանիկ Մատինյանների կողմից ներկայացված դիմումները, 16.05.2019թ. N 16052019-06-0028 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի թիվ 01/111.4/02479-2021 համաձայնությամբ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010 թ.-ի թիվ 186-ն հրամանով, հիմք ընդունելով «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագծերը, որոշում եմ.

1.06-029-0006-0007 կադաստրային ծածկագրի հողամասի ընդհանուր մակերեսը հաստատել 0.26312 հա:
2.06-029-0006-0007 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,11428 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:
3.Հաստատել Գյուլագարակ համայնքի, Գյուլագարակ գյուղի 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 1 հասցեում գտնվող տարանջատման արդյունքում առաջացած երեք միավոր անշարժ գույքերի նոր փոստային հասցեները՝
• 0.00708 հա հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գ.Գյուլագարակ 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 1:
• 0.11428 հա հողամասի և հողամասում առկա առևտրի և սպասարկան օբյեկտներին փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գ.Գյուլագարակ 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 1/1 առևտրի և սպասարկման օբյեկտ:
• 0.14176 հա հողամասի և հողամասում առկա բնակելի տան փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գ.Գյուլագարակ 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 1/2 բնակելի տուն:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ